

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկուրիոյ համար	12 Ժր.
Տարեկան վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	3 ցր.
Տարեկան վեցամսեայ	1.50 »

Մանուկան տղայ անու ընկ երեսն համար 40 ս. իմ յեղին երեսն համար 20 անգամ հ. երեսն անգամ անգամներու համար 20 0/0 զեղջ կըլ լայն վառայի համար ձևոք 10 անգամ

# ՇԱՐՇՈՒՄ

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ.ՆՍՐԱՎՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ

Նամակ ու գրու զրկել ևն արտարարան հասցիին :

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձևոք ( 20 ՍԱՆԹԻՄ ) ( Պուշկուրիոյ համար ձևոք ( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրութիւնք ևս չեն տուիր

«ՇԱՐՇՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԿԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

### ԲԱՑ ՆԱՄԱԿ ԶԻԹՃԵԱՆԻՆ

Պատուելի՛, Ձեզ անձամբ ճանչնալու պատիւ չեմ ունեցած տակաւին, ու թերեւս երբէք չունենամ կեանքին մէջ այդ աննախանձելի պատիւը, նկատի ունենալով իմ վաղն սկան ինքնաբերաբար տեսլութիւն՝ պատուելի տիտղոսուած միտքի և զգացման փութութիւններուն համար, որոնց միշտ ընդ ազգայնաբար նայած եմ ու մանաւանդ երբէք չեմ հաշտուած արդի բնկերութեան մէջ գեղ անոնց գոյութեան ընդվզեցուցիչ գաղափարին հետ :

Այն բառով ձեզ սիրեք պատուելիները :

Մեր նախնիքաց սերունդին բնկերութիւնը, սակայն, յոյժ պատկառելի տեղ մը կը բռնէր պատուելիին : Այնպէս հակառակ տարազով բնական էր ան, վարդապետը, եղբայրս որ զձեզ կուզէր, արարած մը որ յարգանքի հոռուներ կը պատուեցնէր իր անցած ճամբաներուն վրայ, ծրուած, զեռնամած գլուխներ, կթած զողոթուն թիկունքներ ողնակներով իր խեղ ու դաժան նայուածքներուն տակ Ատենիին, հայ մատակարարութեան վճարական վերջնական տիպարներն էին անոնք, իրենց շուրջ սրբազան թանձրամած տգիտութեան կարգերուն մէջ պատգամի որոտնը կը թնդացնէին. և համայնագիտական հսկայ գանձերու շախախիչ տպագորութիւնը կը ներգործէին ամբոխներու վրայ :

Քիչ մը միմոսական, կէս մը գաւնչտական, ու կտոր մըն ալ ողբերգական այդ դէմքերուն շրջանը շատոնց անցաւ : Կարծես նոյն իսկ յիշատակներն ալ կորսուելու վրայ է : Առանց աղմուկի ու հորիզոնին ծայրը մարող հալոյ ամպի մը կտորին պէս, պատուելիութիւնը անյայտացաւ հայրութեան մէջէն, նորադարձ

մտաւորականութեան առողջ, սէգ, կորովի բողբոջումներ այդ գոտացած ազգային ճիւղերը վանեցին : Ա՛լ չպիտի բոսնին անոնք, ապահով եմ :

Բայց, ապշեցուցիչ բան, դուք և ձեզի նման մէկ քանինքներազանդութեան շնայաբար հիկ պարգեւները հայրութեան—տակաւին կը յաւերժացնէք պատուելիութիւնը, իբրև է որ ոչ այնքան նման մեր հնամեայ երանելի պատուելիութեան :

Ազգը, իր վաղեմի պատուելիներուն անբաղնիքն նոր պատուելիներու յառնուած տեսաւ, բողբոջական պատուելիներուն, «Ստուծոյ խօսքին» և «հանդերձեալ կեանքին» քիչէ քարոզիչներուն : Ձերը աս ալ չէ սակայն. ձերը տարօրինակ, ախճաֆ պատուելիութիւն մըն է : Մինչդեռ, տրամաբանօրէն, պատուելիութիւնը երկրաչափական գծերով կը հակառակի յեղափոխութեան, դուք յեղափոխութեան և պատուելիութեան անհաշտ, անշաղախելի խառնուրդը կը ներկայացնէք : Վերադարձութեան մէջ իսկ, կարծեմ, զիրար վանող, իրարմէ փախող տարբերու այսօրինակ խառնուրդ մը կարելի չէ գտնել :

Պատուելի և յեղափոխական : Մեր ազատագրութեան ներկայ տագնապալի շրջանին մէջ, ձեր այս կրկնեցումը հանգամանքով իրաւ որ գերազանցապէս եղական տիպար մըն էք, եւ շահեկան տիպարներու հոգեբանութեան ուսումնասիրութիւն հետամտող մը.—ու մինակ այս հանգամանքին տակ,—կուզէի ձեզ ճանչնալ, ու քննել ձեզ, ձեր հոգին, ձեր սիրտը, միտքը, էութիւնը, ձեր շարժումները, ձեր խօսքերը, շեշտերը, գաղափարները, ձեր ամբողջութիւնը վերջապէս :

Հեռուէն, կենթագրեմ որ տուեցու կամ միտպոցու հարուստ տիպար մըն էք, որ կը հրճուեցնէք հոգեկներն վիպասն մը և որ պիտուէք ի հրաշալուն տողեր կրնաք արատաբեր լալ :

Ի՛նչ ալ ըլլաք, անհաճոյ տպաւորութիւն մը կը թողուք իմ վրաս և անշուշտ շատերու վրայ : Մերթ ընդ մերթ, ասկէց առաջ, Ամերիկայի թերթերը ձեր անունը կը բերէին մեզի՝ միշտ անախորժ միջադէպի մը, կուսակցական տպի վէճի մը, մամուլի սովորական դարձած խեղաթիւրումներու առթիւ : Ձեր վարմունքին մէջ երբէք, օր մը, շիտակ, անկեղծ, ասպետական բան չտեսայ : Եւ դիտեցի որ Ամերիկայի հայ գաղթականութեան մէջ անդորրիչ պատուելի մը կամ Տիրոջը խօսքը քարոզող գեղեցիկ պատուելի մը ըլլալէ աւելի գայթակղութեան խոշոր քար մըն էք : Քանի մը կուսակցական մարդիկ ձեր անորոշ պատուելիութիւնը, տարտամ անձնականութիւնը փայլախել, սիրաշահել օգտակար սեպեցին, ու անոնք անդին պարտոցուցին զձեզ իրբեւ քարոզիչ այն յեղափոխութեան որմէ ապահով եմ ի՞նչ բառ մը չէք հասկնար :

Եւ աս հայ յանկարծ իմացանք որ «թրանսանթլանթիք» զձեզ Լոնտոն փոխադրեք է, Հնչակեան միութեան տարօրինակ կեդրոնը, ուր վեց մարդիկ համերաշխութեան տրամօքովէն կը խաղաչին՝ լուտանքի, ամբաստանութեան ուսման արձակելով իրարու գլխի, ապստամբութեան գործնական դասեր տալով իրարու : Վայրկենին հասաք հոն, և անհաշտութեան, հերձուածի գործը ամբողջացուցիք՝ իրբեւ անմիութեան փորձ վարդապետ : Անձեր պատուելիի սուր հոտառութեամբ վառագուած շահեր գգալով՝ ինքզինքնիդ՝ ինչալիզօրէն՝ նետեցիք պալքանեան թերակղզին, ուր զձեզ կանխած էին հակառակամարտ շրջաբերականներ՝ Հնչակեան ցնծուած, նուիրագործուած միութեան կործանումի գուժական :

Հիմա կիմանանք որ ճառեր կ'ըսէք, զոց սորվում յիզափոխական բանաձեւեր կը թուցնէք մէկ քանի բերանարաց միամիտ-

ներու, որոնք անշուշտ չեն գիտեր ձեր ով ըլլալը և ազատութեան պատգամաբերը տեսնել կերպն ձեր պատուելիութեամբ անձնիքին վրայ :

Յիշուէ՛ն Սօֆիա անցեր էք, հոն ալ քարոզելու համար միեւնոյն դիտումաւոր կեղծութիւնները : Բայց, ինչպէս կը յայտնէ մեր թղթակիցը այսօրուան թիւին մէջ, ստիպուեք էք կծիկը դնել՝ պահ մը կորսնցուցնելով ձեր պատուելիաշնորհ լրջութիւնը :

Ձեք գիտեք թէ ձեր ծրագիրը ամբողջ պտոյ մըն է Պուլկարիոյ շուրջը : Ի՞նչ ոչ Սօֆիայի կայարանէն տոմսակ մը առնելով Եւրոպայի ճամբան բռնել է :

Եթէ իմ խորհուրդիս ուզէք անսալ, մեծայարգ պատուելի, ձեր փրկութեանը, Հնչակեան կուսակցութեան արժանապատուութեանը և մեր ալ հանգստութեանը սիրուն ելք գացէք սրտեղէն, Լոնտոն, Ամերիկա, սատանային գիրկը, ո՛ւր որ հաճոյ թուի ձեր ազնուութեան :

Եւ եթէ իմ խորհուրդիս անսալու հաճոյակատարութիւնը աւելի առաջ տանիլ ուզէք, պիտի համարձակէի յորդորել զձեզ—նետեցէք ձեր իրաւասութեան վրայ այս ստանձգումիս—որ ոչ միայն հեռանայիք Պուլկարիայէն, այլեւ հեռանայիք և ընդմիջտ, սա յեղափոխական ասպարէզէն, ուր երբէք բանի մը չպիտի ծառայէք, ու ձեռք առնէիք նորէն քարոզիչ պատուելիի ցուպը և սկսէիք Աստուծոյ փրկարար խօսքը և հոգիի յաւիտենական փրկութիւնը քարոզել ձեր եղբայրներուն :

Այն ատեն, հաւատացէք, աւելի օգտակար պիտի ըլլաք մարդկութեան :

Շաւարշ

---

Յաջորդ թուով  
Թե ինչո՞ւ չյարդրեցաւ Հնչակեան Միութիւնը

### ԱՆՁՆՍ ՆԻԹԵՐ

Աղմկայից հարսանեկան հանդէսներ չեն որ կը պակսին Պոլսոյ մէջ, մասնաւոր թերա, ուր Երրորդութեան եկեղեցին ժամագրովայր մը եղած է սիրամարգի նման զարգարուած եւ վարսովորային կրպակէն նոր դուրս ինկած սնամիտ պարոններու: Եկեղեցիէն յետոյ Սըլանտիտի մէջ է որ կը շարունակուի ցուցադրութիւնը հողանի թեւերու, լեցուն կամ շինուած կուրծքերու եւ անուշաբոյր ծոծրակներու: Կոն շատ անգամ պատրարքն ալ եպիսկոպոսներէ, վարդապետներէ, քահանաներէ ու ախանաւոր անձնաւորութիւններէ շրջապատուած է Պոլսոյ հայ-լայիկները: Աստիք հաւաքածոյ մըն է շտեմներու, ախտաորներու եւ մուսթիւններով օժտուած ոսկեքարձներու որոնք աչքերուն ծայրով կը հետեւին շարունակ կիներուն ամէն մէկ քայլին: Պարկիտութիւն ըստուած բանը վերցած է այդ դասակարգին վրայէն որ ինքզինքը Պոլսոյ հայութեան իրենց կանուանէ:

Ասոնք կուտան, կը խմեն, կործանեն եւ կ'երանեն նորագասակ ամուսնները ու ցնծութեան աղաղակներու մէջ կը փառարանեն այդ օրը որ ծնուած անսահման ուրախութիւն բերելով ամէնուն ալ:

Շամբանեան առատօրէն կը հոսի, անուշէղէնները տեղի կուտան կարկանդակներուն: Կինը, խաղը եւ գինին իրարու պլլուած սրտեր կը յուզեն, մտքեր կը պղտորեն եւ ըզգացումներ կը ծնին ու երբ կը վերջանայ օրմին, ամէն մէկը իր պարտի-պահանջէի տնտրակը աչքէ կանցընէ գլխաւու համար թէ վրայ տուած է թէ չահած:

Այս է անա Պոլսոյ հայութեան իրենց վիճակը: Կը ցնծայ Պոլսոյ անհոգ, անփոթ իր ուրախութիւններուն եւ տօներուն մէջ: Չէ՞ մի որ անպրեկու է ու ասկէց զատ ուրիշ աշխարհ չկայ:

Պէ՞ղծ գաւառացին, մեր գիտցած խոլ տանջանքներէն զատ արդեօք դեռ ինչեք կը քաշէ. քանին՝ քան անձայն, անչուկ կը մեռնին քիւրտին

եւ տաճկին սուրին տակ. քանին՝ քան որ իրենց մեռելները կուտան: Ուստի հաց չուեն թաքնալու հագուստ եւ փայտ չուեն, ապագայէ յուսահատած են ու աչքերնին երկինք տնկած օգնութիւն կը հայցեն: Դարձեալ թրքո-ուսական սահմանազուխին վրայ քանի՞ հազարներով եզրայրներ եւ քոյրեր կան որոնք ոչ ասորին կրնան գալ եւ ոչ ալ անորին երթալ կուզեն ու մնացած են հոն՝ զամուած, ցուրտին եւ քուքին դէմ, հայրենիքին կարօտովը, առանց հացի, առանց բնակութեան որոշ անդի մը եւ առանց օգնութեան:

Քանին՝ քան արտասահմանի մէջ որ օրուան հացն իսկ ճարտու անկարող են, եւ յուսահատ մահուան կը բազմանան:

Սրիւնը կը վազէ կաթիլ կաթիլ մայր հայրենիքին հողը ուռնակով: արցունքները դեռ կը պարպուին լալէն յոգնած աչքերէ եւ հայութեան մարմնոյն վրայ բացուած ահուելի վերքը շարաւի ծայրքեր դուրս կուտայ, հատչներ կը լսուին ամէն օր, գոյժեր կը շանին չորս կողմէն ու անորին Պոլսոյ հայ-լայիկ ոսկիներ կը վատնէ, չամբանեաներ կը պարզէ, ծախեր կը գարնէ, ուրախութեան մէջ սիրաբ կը արօթէ եւ չիմտածեր զոնկ իր փառասիրութեան անհնաճանքները զթութեան զպարտմանով եւ չուզեր զեղէլ հարսնիքի մը ծախսերը աչքու համար գանձօք հաց, տուն, տեղ, հագուստ եւ կապուստ չունենցողներուն, որոնք իր եղբայրները եւ քոյրերն են:

Պարասանձեան մը 10000 ոսկի գրարածօթ կուտայ իր աղջկան՝ սուսիտի մը գլուխը հանելու համար զայն ու 10 փարա չիտար աղքատներուն, տանջողներուն, զրկուածներուն որոնց մէջ իրեն նման հայրեր ալ կան եւ որոնք աղջիկներն բազմին միայն ձգելու դատաւարտուած են, եթէ սահայն քիւրտին կամ թիւրքին անզգամ կիրքերուն ճիրաններէն ճողպարու յաջողին:

Ահուելի է այս հակապատկերը եւ զգայուն մարդը կը վրդովէ ու կըմբոստացնէ:

Սրիւնան Հայրիկ որ այսօր խաղալիկ մը դարձած է իր շուրջիններուն ձեռքը: Տիշո յայնպէս ինչպէս նոր ասորին նուէրներ բերող երեւակայական ձեռքերէն զածէ պատկերները սղալոց ձեռքերէն մէջ, բարեհաճեր է լանջախաչ նուիրել Օտոնայի Գրիգոր քահանայ Պարասանձեանին:

Ջգիտները թէ ինչ բրած է այդ քահանան, բայց սա գիտենք ստոյգ աղբիւրէ թէ ուսական լրտես մըն է ինքն ալ, իր տղան ալ որ նոյնպէս քահանայ է եւ լրտեսներուն էն անխիղճը, որուն երեսէն Օտէսա ինկող հայ զազիականներուն մէկ մեծ մասը տանջուած եւ վտնուած է:

Ահա ապացոյց մը եւս թէ ինչպէս թուրքերոյ մէջ, յայնպէս ալ մեր մէջ լրտեսները էն բազմաթիւներն են ու լրտելի կը վարձաքորտին եւ նշան բուած մետաղին կտորը շատ անգամ կիյնայ յայնպիսի կուրծքերու վրայ ուր դաշոյն միայն մրտուելու էր:

### ԹՂԹԱՎՑՈՒԹԻՒՆ

Սօփիս, 29 նոյեմբեր

Ամսոյս 27ին քաղաքիս մէջ տեղի ունեցած յարմարի մասին կը փութալ անկեկութիւններ տալ Շարժումի յարգելի քննիչներուն:

Կարգադիր մասնախմբին կողմէն ցրուած յայտարարութիւններու համաձայն իրիկուան ժամը 8 1/2 ին Ս. Արտուածածնայ եկեղեցիին մէջ հաստատուած էր Սօփիայի զարգութիւն մէկ ստուար եւ կարեւոր մասը ունեկնիչի ըլլալու պատուելի Կ. Ջիթձեանի, որ օրուան հիւրն էր:

Յարգելի շտեմնախօսը իր ձեռք մօրմէն լսած օրինակներ մէջուկ բերելով պարզեց մեր պայտերուն ստրկական վարդապետութիւնը, որ համակերպութիւն կը քարոզէր բռնակալ ռեժիմին դէմ, եւ ունեկնիչներուն ուշադրութիւնը հրաւիրեց հայ ազգին արդի կացութեան վրայ ու բողոքաբանութիւնը զայն 25 տարի ստալուան մեր խաղաղ բայց ստրկական կեանքին հետ, շատ փոխուած, դժուարին:

անտանուի եւ նոյն իսկ դժոխային գաւառ: Սակայն միւլթապոլսի կետր սա է, աւելցուց, թէ Հայ ազգը այսօր կարող է յանձնի Սէրէնձեաններու պատմութեան Արամները, Յիւրանները, Մեթրօֆները եւ ուրիշ շատերը վերականգնանքն, որոնք Հայ ազգին բոխկները եղած են:

Արդի քրիզիքական վայրկեանին ազգին մարդկութիւնը պահպանելու միակ միջոցը, ըստ պատուիրին, յեղափոխական մարմիններուն գրեթե մական անմիջական օչնդրեանն է որ նիւն է, որպէսզի կարելի ըլլայ ստեղծ հաստատ հիմերու վրայ գնել յեղափոխութիւնը, որ ազգին խարխիւնն է: Պատուելին, յեղափոխութեան բարձր գերին վրայ հիմնաւոր խանդավառօրէն գոչեց. «Տուէ՛ք ինձ միայն ստարներ, ես ձեր երազին ցորը Հայաստանը կիրովոնացնեմ»: Անչուա կը զատանցէր:

Բիշ յետոյ պատմութիւն յայտնեց, թէ ժողովրդին բարին մէջ ինքնապաշտպանութեան ոգին ներմուծել յեղափոխութեան ազգային քայլը առնել ըսել է, այդ պատճառաւ կը խնդրէր որ ժողովուրդը իր օճանգակութիւնը չզլանայ:

Եթէ այս գաղափարները պատուելին անկեղծ համազմուածքն են, պիտի ըսու թէ ինքը յեղափոխական գաղափարներու եւ հայրենասէր զգացումներու տակ թողարկուած կեղծաւոր մըն է պարզապէս, քանի որ ըսածը զորքէն բոլորովին կանխուէ, ինչ որ անկեղծ գործիքի վը սկզբունքին բոլորովին հակառակ է: Որովհետեւ, եթէ չեմ զբաղիր, նայինք պատուելին էր բողոք Փրոփիլէնթ մէջ, անուղակի կերպով, թէ ինչ ունիւնները իրեն կերպարանքն կը կարող օգնել Սասնաճի ինքնապաշտպանութեան գործին, քանի որ գործը թիւրքի զենեցողը իրաւունքներ թիւրքի է:

Յարգելի պատուելի Կ. Ջիթձեանը որ կը հաւաքուէր չէր քոյր մասնախմբին կողմէն: Ինքնապաշտպանութեան գործարարուն չ'պիտի մահմաններ, միթէ՞ Սասնաճի ինքնապաշտպանութեան ընդհանրով այդ նպատակը ինքնապաշտպանութեան շնորհիւ յատկապէս Պատուելին այս հակապատկերը:

### ՀԱՅ ԺՈՂՈՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՌԱՊԱՍԷՐ ԵՒ ՌՈՂԱՅԻ ՊԱՐՏԲԸ

(Բանախօսութիւն է. Պէտքայնի)

Մեր օրերը, թուրքերոյ մէջ, մահմանականութիւնը, իր սկզբունքներով ու իր վարդապետութիւններով՝ քաղաքակրթութեան հիմնական ստատար մը չէ:

Բայց այս բանը միայն թուրք ժողովուրդին համար չ'հեկանութիւնն ու նիւսիս հոս միտնարներու գումարում մը չենք, թուրք ժողովուրդին կիյնայ հրահանգուելի եւ լուսաբանուելի այս վարդապետութեանց խնդրին վրայ, չիմակ ուրիշ իրողութիւն մը կայ, այն է թէ թուրքերոյ մէջ, մահմանականութեան սկզբունքներուն համաձայն, անհատաները հարածուելու չեն, բայց անոնք պէտք չէ որ հաւատակիցներուն հետ միեւնոյն իրաւունքները վայելեն:

Թուրքիան, իր կաղմական օրէնքին համեմատ, ինքնակալութիւն է կառավարութիւնը նոյնքան բացարձակ է որքան Ռուսիա. ինքնակալութիւն մըն է, որուն պետը միանգամայն կայսր է եւ թիւրք:

Սուլթանը միեւնոյն ժամանակ տէրութեան պետն է թէ՛ քաղաքականապէս թէ՛ կրօնապէս. տեսականապէս բացարձակ անքն է որդոր հաստացեալներուն: Թուրք քաղաքականութեան ամբողջ ոգին կը հանդիսանայ սկզբունքին վրայ, եւ մեծ մասամբ ասիկայ է ատճառը որ թէ՛ Սուլթանը եւ թէ՛ իր յաղաքային ու կրօնային սատրապները այդքան յատուորէն կ'ընդդիմանան ամէն յատուորական քաղաքականութեան թուրքերոյ մէջ:

Այս տեսակէտէն դիտելու ենք թուրքերոյ կացութիւնը. Բայց քրիստոնէական կրօնքին դէմ մեր կանխադատութիւններուն պատճառովը կամ քրիստոնէայ յետադիմական կրօնաորներուն հանդէպ մերատեղութեան մը դուռը՝ պէտք չէ որ մեր ամբողջ համակրութիւնը շնորհներ մահմանականութեան եւ անոր քաղա-

քական ներկայացուցիչներուն, այսինքն պաշտօնական թուրքերոյ, թուրքիա, իբրեւ պետութիւն, ժ.Ր. գաւառն ի վեր կը գտնուի անզգրում եւ յարաճուն անկուսի մէջ: Յաճախակի ըմբոստ իր ենչիւրիներուն հետ շարունակ կտուի մէջ, հետզհետէ Ռուսալէն անարեկուած, անկալու տիրուած է աւելցնել իր անտեսական ճնշումը իրեն հպատակ ժողովրդոց վրայ ճնշում որ բնականաբար բնորոշութիւններ յատուց պիտի բերէր: Եսա յոյները եղան որ ժ.Ր. դարուն ամենարեւուն կերպով սկսան պայքարիլ թուրքերոյ դէմ ինչ եղաւ ապատութեան այս շարժումին արդիւնքը:

Եթէ այս ինչորք քննէք անոր պատասխանը պիտի գտնէք սա իրողութեան մէջ որ թուրքերոյ մէջ թատառները միշտ պատրաստ են երբ ժողովուրդը մը լուրջ յարձակում մը փորձել ուղէ կառավարութեան դէմ: Եթէ պատահի որ ժողովուրդի մը զոգէն ազատութեան կարեւոր շարժում մը ծագի, անմիջապէս ըմբոստները վախցնելու համար մեծազանդուած կտորածներու կը ձեռնարկու-

ուի. թուրք պետը իրենց կամուսուր եւ անկանոն զօրքերը կ'արձակեն շուտ անհաւասանութեան դէմ. որոնք չեն մասամբ անդէն են եւ որոնց դիմ կը զրգոնեն նախապաշարեալ ամբողջներու մոլեռանդութիւնը: Այսպէս պատահեցաւ 1822ի Կիոսի կոտորածին ստեղծ ուր թուրք ծովակալին հրամանատարութեան ներքեւ իր 2000 անդէն յոյներ խողովորուեցան ամէնամեծ անգլիոսիկամը (Ջոյոյի) շու մուլ ժողովի մէջ):

Աս կտորածը, ուր անոր զայնուր փութեաններ սեղի ունեցան, ամբողջ Եւրոպայի մէջ ստեղծուի պետականներ ատու թերաւ. խանդավառութիւն մը յատուց կ'ուսուցանէր մար որոնք, զժողովուրդ պայքարներ յետոյ, յաջողեցան աղտով թուրքերոյ յուճէն: Եթէ հոս կը խօսուի ատանց ինչայիւր թուրքեր, նորէն կ'ընեն իմ խօսքերն չեն ուղղուելու համարքն թուրք ժողովուրդին. նոյն իսկ չեմ մոռնար որ ամէն ատեն այս երկրին մէջ զատ յատկապէս պետական մարդեր գտնուած են, որոնք լուրջ բաներնորոգումներ կ'ամենցած են, բարեապակամ մարդիկ որոնք փորձած են:

Քաղաքը դիտարկելու հարմարություն չկալով... Բնակչության թիվը...

ՆԱԽԵՐԵԱՆ ԽՈՍՏՈՒՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Համար 1-ը դասված է ըստ թվերի... Գրքերի ցանկը...

Գրքերի ցանկը... Գրքերի ցանկը...

իր սյուրբերը փոխանակ Պոլսոյ Հայ... Լայնօրէն հինգամ կամ աւելի ճիշդ չգրա-

Աստուծոյ ինչո՞ւ չընէր պ. Սլաքը... Եթէ օգտակար ըլլալու բարի մտադ-

չէ, այլ քրիստոնէականի մը արժէ-... Եւ այն տեսակէտէն հարկ է որ քըն-

ցածներէս մէկէն, և ստիկա կը կրկ-... նեմ, աչք անհերձ պ. Սլաքէն չտես-

Չարմանայի, որքան ցաւալի է տես-... նել թէ պ. Սլաքի պէս զարգացած

ՄԻՆԻ

աարեւելեաց եւ չաճեցաւ կալվինա-... կան ոգիին շնորհիւ:

ՍՈՑԻԱԼԻՉՄ ԵՒ ԱԿՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բ.

Շարունակենք մեր փաստերը... Գրեթէ բոլոր երկիրներում, ալկո-

Հօլլանդիայում սօցիալիստները... վաղուց են կազմակերպել հակադիկտա-

Բայց, սպացուցելու համար թէ... բազմաթիւ Գերմանացի սօցիալիստ-

1. Հայդէլբերգի սօցիալիստները

Քիչոյ լաւագոյն պետական մարդոց... Երբ անոնք բարեկարգուեցին փո-

(Շարունակելի)

առաջարկել են (30րդ. առաջարկութեան) կուսակցութեան հրատարակելները հրատարակեն մի տնտեսական բնույթի, որը արդի պրոլետարիայի շարժման համար ակնդիտ չափազանցութեան վնասակարութիւնը ժողովրդականացրած ձեւով ցոյց տայ:

2. Շուտագործի սօցիալիստները աւելի նպաստաւոր մի առաջարկ(31րդ.) են արել. նրանք պահանջել են, որ կուսակցութեան մամուլը աւելի ուշադրութիւն դարձնի պրոլետարիայի արեւցողութեան վրայ:

3. Երջաւէս, Մէյէրի կողմից (Բէրլինից) եղած առաջարկը (32րդ.) աւելի հեռու է գնում, նա պահանջում է, կուսակցութեան տրամադրելի բոլոր ոյժերը կենտրոնացնել ակնդիտ հարեւոյթներ վրայ:

Թէեւ այս առաջարկները կօնգրէսում մեծամասնութեան կողմից մերժուել են, սակայն այն առաւելութիւնն են ունեցել, որ առաջին անգամ գերմանացի սօցիալիստները մի ժողով զբաղւել է ակնդիտութեան խնդրով: Այդքանն էլ մի մեծ յառաջադիմութիւն է և մի նոր ուղի է բաց անում ապագայի համար:

Անշուշտ հետաքրքիր կը լինի իմանալ այդ առաջարկութիւններին դիմադրող գերմանացի սօցիալիստների պատճառաբանութիւնները և առարկութիւնները:

Գերմանացի սօցիալ-դէմոկրատ կուսակցութեան գլխաւոր նկատուածութիւնները կայանում են քաղաքական պակասի դերը վրայ: Գերմանացիները և հաւաքումները իրատուութեանը կ'արդիւնէ, գինետունը կը լինի կուսակցութեան քաղաքական և տնտեսական բոլոր գործերի անհրաժեշտ համախմբման տեղը. քանի զի գործադուրս պայմանները այս ընթացքով հալածելու վտանգի կ'ենթարկեն, բանտները միայն գինետուն կը գտնեն բաւական ազատութիւն, իրանց պահանջները յայտարարելու. քանի զի կը տեսէ իրերի այս վիճակը, հակակողական շարժումը կը հանդիպէ գէթ կրակորական մի ընդդիմութեան:

Փրանսիայում էլ կան սօցիալիստներ, որոնք գերմանացիների պէս են մտածում: Այսպէս մտածողները ուզում են բանտներին իրանց ձեռքում մի կոյր գործիք դարձնել. միայն իրանց վառքի համար: Մինչև իսկ Փրանսիայում պատգամատրական վերջին ընտրութիւնների ժամանակ, Պարիզից մի սօցիալիստ կանդիդատ, որ այսօր պատգամաւոր է ընտրւած, իրան ընտրողներին ցրել է 10 սանդղի մ'արժող սօցիալիստական պրոպագանդայի տուխակներ, որով կարելի է գինեվաճառից նոյն արժէքով ձրի խմիչքներ ստանալ... Պարզապէս կաշառք է խոստանում: Սօցիալիստականութիւնը փորի խնդրի դարձնելու չափ ստորանալ... ստոթալի չէ՞ք գտնում այս:

Սակայն բարեբաղդարար, այս կարգի դիմակաւոր սօցիալիստները հակառակ, գտնել են պարտաճանաչ, գաղափարական և հետաքս սօցիալիստներ, որոնք ակնդիտութիւնը հաւատարմութեան դրել են սօցիալիստական ընկերութեան առաջ, իրանց զբաղումները առարկայ են դարձրել, ինչպէս Գերմանիայում, նոյնպէս ուրիշ երկրներում: Ուստի էլ նման մի քանի անգամ սօցիալիստներ շատ լուկերպով ըմբռնել և համոզուել են, որ ակնդիտ բանտներին իսկապէս թշնամի է:

Հանուրի կօնգրէսի նման, Պարիզի սօցիալիստական կօնգրէսը երկու անգամ անդադարեցրել է ակնդիտական խնդրի վրայ: Պարիզի կօնգրէսի անդամները, գերմանացիների հետ համեմատած, իրանց պետերից աւելի անկախ, ընդունել են հետեւեւոյ որոշումը. — Ակնդիտականութեան դէմ մղւած կռիւր պէտք է մտնի սօցիալիստ կուսակցութեան պրոպագանդայի մէջը:

Մեր այս նախաբանը կը վերջացնենք սօցիալիստ Վանդէրվէլդի խօսքերով: — «Ինչ բան որ ակնդիտ գործածութիւնն է պակասեցնում, աւելացնում է աշխատող օրգանիզմի տոկոսնութեան էնէրգիան, բարձրացնում է բանտերի բարոյական վիճակը և նրան տալիս է սղաթութեան համար կուելու սի նոր ուժ»:

(Շարունակելի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ(\*)

Նկատելով որ վերջերս Ամէրիկայի հայ հասարակութեան մէջ «Մեծ աղքատի հանգանակութիւններ» եղան և կը լինին տակաւին յանուն Հնչակեան Միութեան:

Եւ նկատելով դարձեալ թէ մինչև ցարգ հանգանակուած զըրամները, կազմակերպուած խումբեր մը ձեռքին մէջ ծանօթ և «Անծանօթ» որկորներու յարգուրդ տալու միայն ծառայած են:

Կը յայտարարենք ամբողջ հայ հասարակութեան և անցուցործներէն անտեղեկ հնչակեան անկեղծ ընկերներուն, որ յանուն Հնչակեան Միութեան և յանուն Հնչակեան կուսակցութեան, ու է հանգանակութիւն թոյլ չիտան և ջանան «արգելք» հանդիսանալ մինչև խնդիրներու լուսաբանութիւն:

Խնդրոց ծանօթ կարգը հնչակեան ընկերներ

Ուսթր, նոյ. 16 1902

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուկար թերթերը կը հաստատեն թէ վերջերս Պուլսոյ բոլոր դեսպանները դիմումներ ըրնր են Երլալը՝ Մակեդոնիոյ համար տրուած բարենորոգումներուն անյայպազ գործադրութեան համար: Իսկ Աւստրիոյ և Ռուսիոյ դեսպանները նկատելով որ տըրուած բարենորոգումները բաւական չպիտի ըլլան գարնան ծագելիք ապստամբութեան առաջը աւելնել կը ստիպեն եզեր թուրք

(\*) Ներկայ յայտարարութիւնը կարտասպան Սմերիկայի Հայրենիքէն իր մասնաւոր շանկանութեան համար:

կառավարութիւնը որ աւելի լայն միջոցներ ձեռք առնուին խաղաղութիւնը ապահովելու համար պալքանեան թերակղզիին մէջ:

ՄԱԿԵՒՈՆԻՍ

«Փրանսիոյ թուրքեր—Չայթունկ» թերթին Սելանիկէն գրուած նամակ մը կը հազորդէ որ Մանասթըրէն առնուած տեղեկութիւններուն համաձայն Շէֆթի անուն թուրք սպայ մը կուսակալ էտհայփաշային թոյլտուութեամբ յոկատ մը զօրքով կը շրջի եզեր կուսակալութեան մէջ և կաւերէ կայրէ կը թալուէ եզեր բոլոր գիւղերը ապստամբներ փնտռելու պատրուակին տակ:

— Միեւնոյն թերթը կը յայտնէ թէ Վոտէնցի շատ մը պուկար աղջիկներ բռնաբարուած և բռնի խլամագած են:

«Իօլիթիզ» ֆօրէսքօնտէնց «Թերթը կը տեղեկանայ թէ Մարէշալ Էօմէր փաշա, որ վերջերս աչքէ անցուցած էր բոլոր թրքօ—պուկար սահմանները, տեղեկագրեր է իր կառավարութեան թէ անհրաժեշտ է որ ամրացուին սահմանագիծի ամրոցները և զօրքերուն թիւը շատցուի որպէսզի կարելի ըլլալարգիլել յառակիկային այլ և այլ ապստամբներու մուտքը Պուկարիայէն Մակեդոնիայ:

— Պուկարական թերթի մը Բարիզէն տրուած տեղեկութեան մը համաձայն Մակեդոն—Օտրինեան Բ. կօմիտէի նախագահ պ. Միխայիլովսքի և տըրթ. Վլաչէվ երեք օր առաջ մեկնած են Լոնտոն՝ անգղիացիներուն ուշադրութիւնը հրուիրելու համար Մակեդոնիոյ մէջ տիրող անտանելի կացութեան վրայ:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

«Վէչէրնա—Ռօշթա» թերթը կը գրէ թէ հաւաստի աղբիւրներէ իր քաղած տեղեկութիւններուն համաձայն վերջերս Երլալը մէջ բաւական անախորժ հովմը կը փչէ եզեր Պուկարիոյ նրկատմամբ: Նոյն իսկ կըսուի եզեր թէ մեծ եպարքօսը Սուլթանին յիշատակագիր մը մատուցել է, որով անոր ուշադրութիւնը կը հրաւիրէ եզեր մասնատրապէս սակետին վրայ թէ մինչև երբ որ թոյլ տրուի Պուկարիոյ խառնուել մակեդոնական գործերուն Մակեդոնիան չպիտի դուրս վտանգի ներքեւ ըլլալէ և կառավարիկէ որ վերջ մը տրուի ներկայ կացութեան, Պուկարիոյ իր արժանաւոր գիրքը տալով պատերազմի մը միջոցաւ:

Կերեւի թէ թուրքերը յունական պատերազմին բարեկամը ելքէն սիրտ առած կուզեն իրենց

զէնքին ուժը պուկար բանակին դէմ ալ փորձել:

— Պուկար թերթը կը գրէ թէ կառավարութիւնը թղթատարական և հեռագրական նոր օրէնք մը պիտի առաջարկէ ապային ժողովին: Մրադրուած օրէնքի համաձայն ներքին թղթատարական համար գոց մակերեսներուն գինը 15 սանթիմէ պիտի իջնայ 10 սանթիմի, յանրաբարուած նամակները 30չն 20ի:

Մրադրով զրկուած թերթերու համար 1 սանթիմէ աւելի չպիտի առնուի իւրաքանչիւր թերթի համար: Իոյն գիւնեքը պիտի ըլլան նաեւ Սերպիոյ հետ փոխանակուած նամակներու համար, Երկու երկիրներուն մէջ փոխանակուած հեռագրիներուն գինը պիտի իջնայ մէկ բառի համար 10 սանթիմէն 5 սանթիմի:

— Գնդապետ Եանքով ամսոյս 3ին հասած է Սօֆիա ժողովուրդը մեծ բաղմունքով և բզկուրութիւնով գիմաուրեր է Մակեդոնացի հեռուր:

Գնդապետ Սօֆիա հաննելեքանի մը ժամ վերջը լեռնականի հազուստով այցելութիւն տուեր է մայրաքաղաքին յոյն և սերպ հիւպատոսներուն և իր շնորհակալութիւնը յայտնելու Եանքով անի և Սերպիոյ մէջ ֆրեյդիպապի սիրալիր ընդունելութեան արժանաւոր:

— Սամաքովի դատաւարի Բասարէլի գիւղաքաղաքի բնակչութիւններէն 171 կ'իւր խնդրագրեր մը մատուցել են Սօֆիայի Ազգային ժողովին և պահանջներ են արկուտ վարութիւնը փակէ իրենց գիւղաքաղաքին մէջ գտնուող բոլոր գիւնետունները, օրօքեպի իրենց այրերը ունեցածները արեւելութեամբ վատնելով իրենց կիները անօթի և մերկ կը պրտտին:

ԹԱՏՐՈՆ

Վալի գիշեր, տիկին Պայաա Եաքարեանի ի նպաստ Պապանեան թատերախումբը պիտի ներկայացնէ մեծաւ պատրաստութեամբ և առաջին անգամ ըլլալով

Հ Ա Ի Ա Տ Ք, Յ Ո Յ Ս, Ս Է Ր  
Թատերաւերջը անշուշտ պիտի փութան քաջալերել հայ բնակիչ այս նորընծայ աշխատաւորը:  
Отговорникъ  
Мурадъ Ераносянъ  
Печатница „Възвѣность“ Вѣр.